# Կինը և քաղաքականությունը

Անվճար հավելված

Մարտ - Ապրիլ 2010


Գենդերային հավասարության հարցերով ՄԱԿ-ում ստեղծվող նոր կառույցը կմիավորի ներկայումս այս հիմնախնդրով զբաղվող չորս գերատեսչությունները: Կուլուարներում այն կոչում են ՄԱԿ-ի «կանանց գործակալություն»:

էջ 4

## Փաստաշար

### Աշխարհի խորհրդարաններում կանայք ընդամենը 19% են



Այս տվյալները հրապարակվեցին մարտի 3-ին ՄԱԿ-ի կենտրոնակայանում անցկացված Միջխորհրդարանական միության մամուլի ասուլիսի ժամանակ, որի ընթացքում կայացավ նաև «2010-ի աշխարհի քարտեզը. կանայք քաղաքականության մեջ» հրատարակության շնորհանդեսը: Միջխորհրդարանական միության վերջին տվյալներով՝ պետությունների 151 ղեկավարներից ընդամենը ինն են կանայք: Իսկ նախարարների շարքում նրանք կազմում են միայն 16%: Փոխարենը Կաբո Վերդեում, Ֆինլանդիայում, Նորվեգիայում և Իսպանիայում կանանց է պատկանում նախարարական պորտֆելների կեսից ավելին:

### Ամեն տարի աշխարհում ծննդաբերության և հղիության ընթացքում մահանում է 530 հազար մայր

Այդ մահացությունների մեկ երրորդը կապված է անցանկալի հղիության հետ: Այսօր 215 մլն կանայք հակաբեղմնավորման ժամանակակից միջոցներից օգտվելու հնարավորություն չունի. այս տվյալները բարձրաձայնեց ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ Սյուզան Ռայսը՝ ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովին ներկայացնելով «Կանխելի մայրական մահացության ու հիվանդացության վերացումը կանանց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման միջոցով» բանաձևի նախագիծը: Փաստաթղթում հաստատվում է, որ մայրական մահացության բարձր տոկոսն ուղղակիորեն կապված է գենդերային անհավասարության հետ:

### Պեկինի համաժողովը



Կանանց հիմնախնդիրներով 4-րդ համաշխարհային համաժողովը, որը կայացավ 1995-ին Պեկինում, նախորդ կանանց կոնֆերանսներից ամենաներկայացուցչականն էր: Նրան մասնակցում էին 17 հազար կառավարական պատվիրակներ աշխարհի 189 երկրներից և 30 հազար կանայք՝ զուգահեռ անցկացվող ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովում: Բոլորը, ովքեր եղել են Պեկինում, իսկ Հայաստանից մեկնել էին կանանց ՀԿ-ների ավելի քան 20 ներկայացուցիչներ (չհաշված կառավարական պատվիրակությունը), միաձայն վկայում են այդ համաժողովի իսկայական թափի մասին: Այդ թափն իր ազդեցությունն ունեցավ համաժողովում ընդունված Պեկինի գործողությունների ծրագրի բնույթի ու բովանդակության վրա: Փաստաթղթում առանձնացվեցին 12 կրիտիկական ոլորտներ, որոնցում ՄԱԿ-ի անդամ երկրները պարտավորություններ ստանձնեցին՝ շտկել կանանց վիճակը: Դա վերաբերում է տնտեսությանն ու կրթությանը, առողջապահությանը ու աղքատությանը, հակամարտությունների կարգավորմանն ու քաղաքականությանը, էկոլոգիային ու ԶԼՄ-ներին...



Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանում



Փետրվարի 27-28-ը ոչ կառավարական համաժողովի բացման արարողությունը

## Պեկինից 15 փարի անց. Կանանց հիմնախնդիրները չեն ծերանում

**Մարտի 1-12-ը Նյու Յորքում անցկացվեց ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանը, որում ամփոփվեցին 15 տարի առաջ ընդունված Պեկինի գործողությունների ծրագրի արդյունքները՝ կանանց և տղամարդկանց հավասարությանը հասնելու առումով:**

Ասել, թե մեկուկես տասնամյակ անց աշխարհն սկսել է ապրել Պեկինում հռչակված հավասարության, զարգացման, խաղաղության կարգախոսի ներքո, մեծ չափազանցություն կլիներ: Գուցե իրավիճակը փոքր-ինչ լավացել է կանանց իրավունքների ճանաչման տեսանկյունից, սակայն դա էլ ոչ ամեն տեղ և ոչ ամեն ինչում: Անարդարությունն ու անիրավահավասարությունը ծաղկում են ողջ աշխարհում. այս փաստի արձանագրումով բացեց 54-րդ նստաշրջանը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Աշա Ռոուզ-Միգիրոն: Նրա խոսքով՝ «վերջին 15 տարիներին թեև որոշակի հաջողությունների ենք հասել կանանց դրության բարելավման առումով, սակայն աշխարհը դեռևս շատ հեռու է կանանց նկատմամբ խտրականության վերացումից:

Այս բանաձևումը մեկ անգամ չէ, որ հնչեց նստաշրջանի ընթացքում՝ ստիպելով նրա մասնակիցներին քննադատաբար գնահատելու տասնհինգ տարվա ճանապարհը: Հատկապես այն իմաստով, որ սեռերի հավասարության գաղափարը կյանքի կոչելու համար միայն քաղաքական կամքը բավարար չէ: Անհրաժեշտ է, որ գործին լծվեն քաղաքացիական հասարակության բոլոր ինստիտուտները, որոնք կարող են ազդել հասարակական կարծիքի վրա: Խոսքն առաջին հերթին կանանց կազմակերպությունների մասին է, որոնք անցյալ համաժողովներից ձևավորված ավանդույթով այս նստաշրջանում նույնպես աշխատում էին պաշտոնական միջոցառումներին զուգահեռ ռեժիմով: Ժամանակին՝ Պեկինի ծրագրի մշակման ընթացքում, հաջողվեց լիակատար ապահովել այս երկու բաղադրիչների կարծիքների միասնականությունը և, ի հետևանս՝ այս փաստաթղթի բարձր որակը: 15 տարի անց համատեղ աշխատելու խնդիրը չէր կորցրել իր այժմեականությունը, սակայն այս անգամ դա այնքան էլ չհաջողվեց:

Պլենար նիստերում և բարձր մակարդակի քննարկումների ժամանակ բոլոր երկրների կառավարությունները ներկայացնում էին Պեկինում ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքը, ձեռքբերումները և խոչընդոտները, այնուհետև փորձագետների հետ քննարկում հետագա աշխատանքների համար ուղենիշ հանդիսացող բանաձևերը: Արդյունքում՝ ընդունվեց յոթ բանաձև ամենատարբեր հարցերի շուրջ՝ սկսած համաշխարհային ճգնաժամի համատեքստում կանանց տնտեսական իրավունքների ու հնարավորությունների ընդլայնումից մինչև մայրական մահացության կանխման հիմնախնդիրը:

Նստաշրջանին զուգահեռ աշխատում էին մի քանի հազար ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնց հանդիպումները ՄԱԿ-ի կենտրոնակայանում ընթացող վերանորոգման պատճառով անցնում էին մոտակա շենքերում: Թեև կազմակերպիչները պարբերաբար ներողություն էին խնդրում պատճառած անհարմարությունների համար, սակայն իրադարձությունների էպիկենտրոնից հեռու լինելն իր արդյունքը տվեց. նստաշրջանի ճեմասրահում և կուլուարներում չէր նկատվում նախկին եռուզեռը: «Զուգահեռ աշխարհից» դեպի կառավարականն ազդանշանները ընդհանուր առմամբ թույլ էին հասնում, նրանք խաչաձևվեցին ընդամենը երկու-երեք անգամ՝ հիմնականում հանդիսավոր առիթներով: Ասենք՝ երբ բոլորը միասին հանդիսավոր նշում էին Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 30-ամյակը կամ մարտի 8-ը:

Ի դեպ, մարտի 8-ի մասին. ինչպես հայտնի է, այս տարի այն հոբելյանական էր. լրացավ Կանանց միջազգային օրվա պաշտոնական հռչակման 100 տարին: Այս օրվա մեր և միջազգային ընկալումների միջև ընդհանուր քիչ բան կա, նույնիսկ նվերների տեսանկյունից: Եթե մեզանում դա կանանց ուղղված ոչ միշտ անկեղծ հաճոյախոսությունների միամսյակ է, ապա ողջ աշխարհում դա իրենց իրավունքների համար պայքարող կանանց համերաշխության օրն է: Հետևապես, մեզանում ծաղիկներ են նվեր տալիս, իսկ օրինակ՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը մարտի 8-ին «նվեր» մատուցեց՝ նշանակելով շվեդուհի Ան-Մարի Օրլերին ՄԱԿ-ի գլխավոր ոստիկանական խորհրդական: «ՄԱԿ-ի գլխավոր ոստիկանը կին է, ու սա հիանալի եղանակ է նշելու Կանանց միջազգային օրը»,- ընդգծեց նա: Նյու Յորքի կանայք նույնպես նշեցին այդ օրը՝ իր նախաստեղծ իմաստին համապատասխան: Նրանք Բրուքլինի կամրջի վրա կանանց համերաշխության ցույց անցկացրեցին՝ հիշեցնելու աշխարհին իրենց ոտնահարվող իրավունքների մասին: Ու թեև այս ակցիան նշված չէր ՄԱԿ-ում անցկացվող նստաշրջանի օրակարգում, իմաստով լիովին համահունչ էր այս տարի մարտի 8-ի առթիվ հռչակված ՄԱԿ-ի կարգախոսին. «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ. առաջընթաց բոլորի համար»:

Այս կարգախոսի կյանքի կոչման անմիջական օրինակին մենք բախվեցինք նույն օրը Մանհեթենի կենտրոնում՝ Բրոդվեյում: «Նա կարողանում էր տեսնել միայն հնարավորությունները»,- նեոնային լույսերով շողշողացող գրությունը միայն առաջին հայացքից ոչ մի կապ չուներ ՄԱԿ-ում քննարկվող խնդիրների հետ: Հսկայական չափսերի թատերական ազդագիրը ծանուցում էր տարվա պրեմիերայի՝ Ուիլյամ Գիբսոնի «Հրաշք գործածը» պիեսի նորացված ներկայացման մասին՝ նվիրված հանրահայտ ամերիկացի գրող և հասարակական գործիչ Էլեն Քելլերի պատանեկությանը: Վաղ մանկությունում զրկվելով տեսողությունից ու լսողությունից՝ նա կարողացավ հասնել այնպիսի բարձունքների, որ արժանացավ Մարկ Տվենի անթաքույց հիացմունքին. «19-րդ դարում եղել են իրոք երկու նշանավոր մարդիկ՝ Նապոլեոնն ու Էլեն Քելլերը»: Երևի թե նրա մասին հիշեցնող այս ազդագիրը իմ ուղևորության ամենանուժեղ տպավորություններից մեկն էր՝ օրինակի համոզչության առումով: Տեսնել հնարավորություններ, հասնել դրանց նույնիսկ այն ժամանակ, երբ դա աներևակայելի է թվում. հավանաբար, սրանում է կնոջ առաջընթացի, բոլորի համար առաջընթացի գլխավոր բանալին:

**Թամարա Հովնաթանյան**
**Երևան - Նյու Յորք - Երևան**

## Մերոնք Նյու Յորքում

«Մենք անպայման հաշվի կառնենք այն ամենը, ինչ լսեցինք նստաշրջանում՝ ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի իրականացման միջոցառումներ մշակելիս»,- խոստացավ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար, Նյու Յորք մեկնած ՀՀ պաշտոնական պատվիրակության ղեկավար **Ջեմմա Բաղդասարյանը**: Պատվիրակության կազմում էին նաև՝ նույն նախարարության կանանց հիմնախնդիրների բաժնի վարիչ **Արմինե Թանաշյանը**, ԱԳՆ մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի վարիչ **Կարինե Սուջյանը** և Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ **Ջեմմա Հասրաթյանը**: Ոչ կառավարական մակարդակում նստաշրջանի աշխատանքների մասնակիցների թվում էին՝ Կանանց իրավունքների կենտրոնի ղեկավար **Սուսաննա Վարդանյանը** և գենդերային հարցերով փորձագետ **Վլադիմիր Օսիպովը**:

Նստաշրջանի արդյունքների մասին նրա մասնակիցները պատմեցին ապրիլի 8-ին ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի նախաձեռնությամբ անցկացված հանդիպման ընթացքում, որին մասնակցում էին հասարակական, կառավարական և միջազգային կազմակերպությունների ու լրատվամիջոցների ներկայացուցիչներ:



## Կանանց ձայնը

### Մերիլ Սթրիփ. Ես հումանիստ եմ և հավատում եմ կանանց իրավունքներին



Հոլիվուդի աստղ Մերիլ Սթրիփը ելույթ ունեցավ կանանց իրավունքների միջազգային կազմակերպության մամուլի ասուլիսում՝ «Հավասարությունը հիմա», որը տեղի ունեցավ մարտի 5-ին՝ Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի շրջանակներում:

Նա կոչով դիմեց պետությունների ղեկավարներին՝ անհապաղ փոխել բոլոր խտրական օրենքները և, մի քանի կոնկրետ օրինակներ բերելով, ասաց. *«Ես անձնական պատճառներ ունեմ, որի համար այս ամենը համարում եմ անընդունելի: Իմ տատը Նյու Յորքում մեն-մենակ մեծացրել է երեք երեխա: Ու ձայնի իրավունք չի ունեցել: Նրանից ոչինչ կախված չէր. ոչ  ում կընտրեն դպրոցի խորհրդում, ոչ ում կնշանակեն փողոց մաքրող, ոչ ով կղեկավարի Միացյալ Նահանգները: Ու սա ահավոր վիճակ էր»,*- հայտարարեց նա: Լրագրողներից մեկի՝ «Կնշանակի՝ դուք ֆեմինի՞ստ եք» հարցին, դերասանուհին պատասխանեց. *«Սա անհետաքրքիր թեմա է: Ես հումանիստ եմ և հավատում են կանանց իրավունքներին»:*

Անդրադառնալով վերջին տարիների կինոյում կանանց դերերին՝ նա մտահոգություն հայտնեց, որ հենց նրանցից  են մեր աղջիկներն օրինակ վերցնում: *«Եթե աղջիկները չեն կարող որևէ մեկին ընդօրինակել, նրանք չեն կարող երազել: Եթե Սիդնեյ Փոլլաքն այսօր փորձեր 30 մլն ստանար «Աֆրիկայից»՝ կնոջ մասին պատմող ֆիլմի նկարահանումների համար, նրան կծաղրեին ու Հոլիվուդից դուրս կքշեին»,*- ասաց նա:

### Հիլարի Քլինթոն. Կնոջ առաջընթացը մարդկության առաջընթացն է



ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի ելույթը Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի փակումից առաջ էր: 1995 թ. Պեկինի կոնֆերանսի իր հայտնի ելույթից 15 տարի անց նա նորից կոչ արեց պայքարել տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների ու հնարավորությունների համար:

Ամփոփելով անցած 15 տարիների արդյունքները՝ պետդեպարտամենտի ղեկավարը նշեց. *«Դեռ այնքան անելիքներ կան, որպեսզի լիարժեք կյանքի կոչենք այն երազանքներն ու այն ներուժը, որը մենք դրեցինք Պեկինում, քանի որ միլիոնավոր ու միլիոնավոր աղջիկների ու կանանց համար հնարավորությունները մնում են անմատչելի, նրանք մնում են աղքատ, անուս և հանդուրժում երկրորդ կարգի մարդկանց արժանի վերաբերմունքը»*:

### Աննի Լենոքս. ՁԻԱՀ-ը պարզապես հնձում է կանանց ու երեխաներին




Մարտի 2-ին հանրահայտ երգչուհի և ակտիվիստ Աննի Լենոքսի երգով սկսվեց կանանց շրջանում ՁԻԱՀ-ի դեմ պայքարի նոր ռազմավարության շնորհանդեսը:

ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի գծով Միավորված ծրագրի տվյալներով՝ իմունային անբավարարության վիրուսը մանկածնության տարիքի կանանց հիմնական մարդասպանն է: Աննի Լենոքսը, որն ակտիվորեն զբաղվում է այս հիմնախնդրով, կոչ արեց ամեն ինչ անել, որպեսզի աշխարհն իմանա, թե ինչ ռիսկի են ենթարկվում կանայք ու երեխաները. *«Մենք պետք է  բախենք հասարակության դռները բոլոր մակարդակներով՝ կառավարությունից մինչև փողոցի հասարակ մարդիկ և բացատրենք, որ այլևս չի կարելի սպասել, որ ՁԻԱՀ-ը պարզապես հնձում է կանանց ու երեխաներին և չի պատրաստվում նահանջել»:*

## ՄԱԿ-ի օրակարգում

# «Հաջողության բանալին պետության, ՀԿ-ների և լրատվամիջոցների ջանքերի համապեղման մեջ է»,-

## համոզված է Կանանց կարգավիճակի հանձնաժողովի նախագահ Կարեն Նազարյանը




**Հայաստանի համար Կանանց կարգավիճակի հանձնաժողովի  54-րդ նստաշրջանը առանձնակի էր այն իմաստով, որ անցյալ տարի հանձնաժողովի նախագահ առաջին անգամ ընտրվեց ՄԱԿ-ում մեր հանրապետության ներկայացուցիչը: Արտակարգ և լիազոր դեսպան Կարեն Նազարյանի համար, որն անցյալ տարվա օգոստոսից զբաղեցնում է այս պաշտոնը, Հայաստանի նախագահությունը ՄԱԿ-ի կարևորագույն ֆունկցիոնալ հանձնաժողովներից մեկում առաջիկա երկու տարվա ընթացքում նախևառաջ պատասխանատվություն է: Պատասխանատվություն հիմնախնդիրների այն առավել քան լայն շրջանակի համար, որունք մտնում են հանձնաժողովի իրավասության մեջ և ամփոփվում Պեկինում հռչակված կարգախոսի ներքո՝ Հավասարություն, Զարգացում, Խաղաղություն: Մեր զրույցը Կարեն Նազարյանի հետ սկսվեց հենց այդ կարգախոսից, ավելի ճիշտ՝ դրա իրականացմանը մոտենալու առումով հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի դիտարկումներից:**

- Ինչպես հայտնի է, մեր հանձնաժողովը ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի (ECOSOC) ու Գլխավոր ասամբլեայի հետ մեկտեղ կազմում են եռաստիճան միջկառավարական մեխանիզմ, որն իրականացնում է Պեկինի գործողությունների ծրագրի համակարգումն ու վերահսկողությունը: Ուստի մեր առջև ի սկզբանե դրված է եղել երկու նպատակ: Նախ՝ պարզել, ո՛ր փուլում է գտնվում վերոհիշյալ փաստաթղթերի իրականացման ընթացքը տարբեր երկրներում, ի՞նչ հիմնախնդիրներ ու խոչընդոտներ կան, և որտե՞ղ է թաքնված դրանց հաղթահարման բանալին: Իսկ մեր երկրորդ նպատակն էր՝ բոլոր վերոհիշյալ հարցերն առավել բարձր մակարդակ մղել, այն է՝ հուլիսին ECOSOC-ի ամենամյա նախարարների հանդիպում, որից հետո սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջան, որտեղ բանավեճ կծավալվի նախագահների ու վարչապետների մակարդակով Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման հարցով: Նպատակներից մեկը, ինչպես հայտնի է, գենդերային հավասարությունն է:

**- Որո՞նք էին նստաշրջանում քննարկված հիմնախնդիրների առանձնահատկությունները:**

- Քննարկումների օրակարգը, բնականաբար, բխում էր Պեկինի գործողությունների ծրագրի 12 կրիտիկական ոլորտներից: Ուշադրության կենտրոնում էին աղքատության, կանանց կրթության մատչելիության, վերարտադրողական առողջության և մայրական մահացության հաղթահարման, որոշումների կայացման մակարդակում կանանց մասնակցության և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ֆոնին էլ ավելի արդիական էր կինը և տնտեսությունը ոլորտը: Լուրջ խոչընդոտ է ՁԻԱՀ-ի հիմնախնդիրը, որ աշխարհի մի շարք տարածաշրջաններում տագնապալի չափերի է հասնում, ինչի համար ներկայացվեց ու ընդունվեց առանձին բանաձև: ՄԱԿ-ի ու մեր հանձնաժողովի մշտական  ուշադրության կենտրոնում է կանանց նկատմամբ բռնության հիմնախնդիրը: Այդ երևույթի դեմ պայքարի հիմնական դիրքորոշումը հստակ է՝ դա հանցագործություն է, հետևաբար՝ անպատիժ չպետք է մնա: Այս թեմայով առանձին բանավեճ անցկացվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի արշավի շրջանակներում՝ «Միասնական ջանքերով վերջ դնենք կանանց նկատմամբ բռնությանը»:

Ըստ իս, նստաշրջանի գլխավոր առանձնահատկությունը ոչ այնքան նրա օրակարգի բովանդակությունն էր, որքան փորձագիտական ինտերակտիվ կլոր-սեղանները, որոնց արդյունքները կամփոփվեն հանձնաժողովի  կողմից մասնակից երկրների կառավարություններին ու դիտորդներին ուղղված փաթեթում: Այս կարգի քննարկումներն արժեքավոր էին նրանով, որ մասնակիցները հնարավորություն ունեցան անմիջականորեն շփվելու հայտնի փորձագետների հետ, որոնք բավական տևական ժամանակ են զբաղվում Պեկինի գործողությունների ծրագրի իրականացման հիմնախնդիրներով, նաև՝ մեր հանձնաժողովի գործունեության շրջանակներում:

Չեմ կարող չնշել, որ Պեկինում ստանձնած պարտավորությունները, լինելով պետական քաղաքականության մաս, ենթադրում են նաև հասարակայնության լայն խավերի ակտիվ մասնակցություն, առանց որի կառավարությունների համար դժվար կլինի հաղթահարել առաջադրված նպատակները: Այս իմաստով պեկինյան գործընթացում միշտ ընդգծվում է ոչ կառավարական կազմակերպությունների դերը, որոնք Պեկինից սկսած զուգահեռ ընթացակարգով նրա լիիրավ մասնակիցներն են: Շատ կարևոր է աշխատանքի թափանցիկությունը, հարկ է  ճիշտ բացատրել այս բոլոր հիմնախնդիրները, որպեսզի հասարակությունը ճիշտ ընկալի և չվանի գաղափարը: Այս հարցում չի կարելի թերագնահատել լրատվամիջոցների դերը: Ինչպես ցույց է տալիս առաջավոր փորձը, հաջողության բանալին ջանքերի համատեղման մեջ է՝ պետության, այս ուղղությամբ հմտորեն աշխատող հասարակական կազմակերպությունների, ՄԱԿ-ի կառույցների և ԶԼՄ-ների: Կարծում եմ, որ մենք էլ Հայաստանում պեկինյան պարտավորությունների արդյունավետ իրացման համար պետք է առաջնորդվենք  հենց այս մոդելով:

> *Եթե մենք խոսում ենք կանանց առաջընթացի մասին, ապա պետք է նկատի ունենանք, որ ժամանակակից աշխարհում առանց բարձր տեխնոլոգիաների առաջընթացն անհնար է*

**- Ի՞նչ եզրակացության հանգեց  հանձնաժողովը: Նկատվո՞ւմ է առաջընթաց:**

- Բոլորի համար նկատելի է, որ Պեկինի դրույթների իրականացման առումով մեծ անջրպետ գոյություն ունի զարգացած և զարգացող երկրների միջև: Մի շարք երկրներում արձանագրվել է էական առաջընթաց: Օրինակ՝ Նորվեգիայում գործող օրենսդրության համաձայն՝ այն մասնավոր ընկերությունները, որոնք իրենց վարչության կազմում չունեն 40% կանայք, կարող են զրկվել գրանցումից: Դրա հետ մեկտեղ կան երկրներ, որտեղ գոյություն ունեն այնպիսի երևույթներ, ինչպես, օրինակ, հանուն պատվի կանանց սպանությունները: Կանանց հիմնախնդիրներն այս կամ այն չափով և դրսևորմամբ գոյություն ունեն աշխարհի բոլոր երկրներում, այդ թվում նաև՝ ամենաբարեկեցիկ, և այս տեսանկյունից ակնհայտ է հաջող փորձի ուսումնասիրման և հարմարեցման անհրաժեշտությունը: Կարծում եմ՝ հանձնաժողովում Հայաստանի նախագահությունը լրացուցիչ խթան կլինի, որպեսզի մենք կարողանանք օգտագործել առաջավոր փորձը մեր հանրապետությունում: Գուցե մեզ առայժմ չհաջողվի ընդօրինակել ընկերությունները կառավարելու Նորվեգիայի փորձը, սակայն ընտրական կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության քվոտաների բարձրացումը մեզ համար միանգամայն իրական խնդիր է: Այսօր ընտրական օրենսդրությամբ նախատեսված քվոտան կազմում է ընդամենը 15% է, ինչը չափազանց քիչ է ոչ միայն ժողովրդավարական չափորոշիչների տեսանկյունից, այլև հայ կանանց բարձր կրթական ցենզը հաշվի առնելով:

**- Կարելի՞ է արդյոք խոսել առաջընթացի մասին համաշխարհային տնտեսական ճգնաժամի ֆոնին:**

- Պետք է ասեմ, որ հանձնաժողովի տված գնահատականները հիմնականում վերաբերում էին նախաճգնաժամային շրջանին և տրվել են 15 տարվա կտրվածքով: Այս շրջանում առաջընթաց, անկասկած, կա, սակայն ես, միևնույն է, կշեշտադրեի կանանց առաջընթացի ճանապարհին խոչընդոտների սոցիալ-տնտեսական բնույթը: Համաշխարհային ճգնաժամի ֆոնին սա ավելի հրատապ է դարձել: Ցավոք, բազմաթիվ երկրներում ճգնաժամի հարուցած հիմնախնդիրներն օրակարգից դուրս են մղել գենդերային հավասարության հասնելու նպատակները, ինչը կոնցեպտուալ առումով սխալ է: Սակայն իրավիճակը թելադրեց իր մոտեցումները: Այս մտահոգությունը հնչեց նստաշրջանի բազմաթիվ զեկույցներում: Հիմնականում դժգոհում էին նրանից, որ ճգնաժամի հետևանքով կրճատվել են գենդերային քաղաքականության շրջանակներում ծրագրերին հատկացվող բյուջետային միջոցները: Հաշվի առնելով, որ համաշխարհային ճգնաժամի հաղթահարման մեջ նկատվում են դրական միտումներ, հուսանք, որ հետագայում այս փաստարկը կսպառվի:

**- Ի՞նչ հետաքրքիր ու նոր պրոբլեմային հարցադրումներ են հնչել նստաշրջանում:**

- Իմ ուշադրությունը հատկապես գրավեց  կանանց համար տեղեկատվական տեխնոլոգիաների մատչելիության խնդիրը: Կարծում եմ՝ հարկ չկա բացատրելու, որ եթե մենք խոսում ենք կանանց առաջընթացի մասին, ապա պետք է նկատի ունենանք, որ ժամանակակից աշխարհում առանց բարձր տեխնոլոգիաների առաջընթացն անհնար է: Սա ըստ էության նոր հիմնախնդիր է, որը, գուցե, 15 տարի առաջ այդքան սրությամբ ծառացած չէր, ինչպես այսօր: Ես, ի դեպ, ECOSOC-ի խորհրդակցություններից մեկում առաջարկել եմ գումարել ՄԱԿ-ի Գիտության ու տեխնոլոգիական զարգացման հանձնաժողովի հետ համատեղ քննարկում՝ կանանց համար տեղեկատվական տեխնոլոգիաների մատչելիության բարձրացման վերաբերյալ: Կարծում եմ՝ նման ձևաչափով հանդիպումը կարող է տեղի ունենալ մայիսի կեսին ժնևում:

Մենք հաճախ ենք օգտագործում կանանց առաջընթաց արտահայտությունը՝ չխորանալով մանրամասների մեջ, թե ինչ բաղադրիչներ են այն ապահովում: Այսպես, տեղեկատվական տեխնոլոգիաների մատչելիությունը առաջընթացի պարտադիր բաղադրիչներից է: Մեկ այլ պարտադիր նախապայման է տղաների դաստիարակությունը՝ նրանց կողմից գենդերային հավասարությունն ընկալելու իմաստով: Խոսքն այն մասին է, որ գենդերային հավասարության գաղափարը պետք է սերմանվի մանկուց, դպրոցական նստարանից: Մենք պետք է լուսավորենք մեր երիտասարդությանն այս ուղղությամբ, որպեսզի նա կյանք ու հասարակություն մտնի նոր որակով, պատրաստ հասկանալու և ընդունելու գենդերային հավասարության գաղափարը...

**Զրուցեց**
**Թամարա Հովնաթանյանը**

## Տեղեկանք

Կանանց կարգավիճակի հանձնաժողովը ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի (ECOSOC) ֆունկցիոնալ մարմինն է: Նրա կազմում են ՄԱԿ-ի 45 անդամ-պետություններ, ի թիվս որոնց՝ Հայաստանը, որը 2010-2011 թթ. ընթացքում նախագահում է հանձնաժողովում:

## Զուգահեռ չափում

# «Ես չզգացի այն տոնը, որ կար առաջ...»

- Ես եղել եմ բոլոր միջոցառումներին՝ Պեկինից սկսած և պետք է ասեմ, որ չնայած ՄԱԿ-ի այսպես կոչված գենդերային ճարտարապետության փոփոխության մասին բոլոր խոսակցություններին՝ չնկատեցի այն տոնը, որ կար առաջ: Մինչդեռ ժամանակին իրոք տոն կար, կային հույսեր, կար բուռն գործունեություն... Կար կանանց կազմակերպությունների ամենօրյա խորհրդակցություն, որն ընթանում էր առավոտյան 9-10-ը, և բոլորը գալիս էին ու քննարկում: Այս անգամ դա չկար: Եվ նույնիսկ այն, որ առաջին օրը շատերը 7-8 ժամ հերթ էին կանգնել՝ բեյջ ստանալու համար, նստաշրջանի կազմակերպումը լավագույն կողմից չի բնութագրում: Եվ այն, որ սրահներում տեղերը ոչ միշտ էին բավականաչափ, և մենք պետք է ստանայինք առանձին լրացուցիչ տոմս, և տոմսերն էլ ոչ միշտ էին բավականացնում՝ այս ամենը վկայում է ՀԿ-ների հանդեպ վերաբերմունքի մասին: Մինչդեռ, միայն կանանց ՀԿ-ները կարող են գենդերային քաղաքականության ուղեկցորդ լինել: Առանց նրանց անհնար է լուծել գենդերային հարցեր: Դա այն խնդիրը չէ, որը լուծվում է վարչարարությամբ, այն լուծվում է միայն սոցիալականորեն: Այսօր, ինչպես երբեք, ակնհայտ է, որ կանանց ՀԿ-ներին անհրաժեշտ է ինստիտուցիոնալ աջակցություն: Այդ դեպքում նրանք դառնում են սոցիալական ինստիտուտ, այլ ոչ թե կազմակերպություն, որ ապրում է նախագծից նախագիծ: Ազդեցությունը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ նրանք ունեն իրենց գործունեության ծրագիրը՝ անկախ նախագծերից, միայն այդ ժամանակ նրանց հետ հաշվի կնստեն:

**Ելիզավետա Բոժկովա**
*Ռուսաստանի կանանց անկախ ֆորումի տեղեկատվական կենտրոնի տնօրեն*



# «Առաջարկում եմ ստեղծել կովկասյան երկրների կանանց խորհրդարան»

- Աշխարհի բոլոր կանայք ունեն միևնույն խնդիրները: Եվ նման հանդիպումները մարդկային շփումների շնորհիվ, անկասկած, օգնում են միասին լուծելու այդ խնդիրները: Ես, ասենք, առաջարկում եմ ստեղծել կովկասյան երկրների կանանց խորհրդարան, որն ինչ-որ կերպ կարող է մեղմացնել իրավիճակը մեր պայթյունավտանգ տարածաշրջանում: Մեզանում կան բազմաթիվ էթնիկական խնդիրներ, որոնց լուծումը կախված է քաղաքականության մեջ ողջախոհ կառավարումից, և կանանց մասնակցությունը կարող է դառնալ նման կառավարման մի բաղադրիչ: Ինչ վերաբերում է նստաշրջանին և նրա արդյունքներին, 15 տարի անց թվում է, որ ժամանակն իրենն անում է, իհարկե ,ցանկալի է ամեն ինչ ավելի արագ լիներ: Գլխավորը, որ կանանց հիմնախնդիրները բարձրացվեն բարձր պրոֆեսիոնալ մակարդակով, այդժամ օգուտ կլինի և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար: Չէ՞ որ նրանք մեր մարդկության երկրորդ կեսն են, և նրանց մասին չպետք է մոռանալ:

**Թամարա Կիկնաձե**
*Վրաստանի համալսարանական կրթությամբ կանայք, քաղաքագիտության դոկտոր*

# «Ինձ թվում է՝ մեր շարժմանը պակասում է ժառանգորդությունը»



- Ես եղել եմ Պեկին+5-ի արդյունքների ամփոփման հանդիպման մասնակիցներից ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրներից երիտասարդ աղջիկների խմբի կազմում: Ինձ թվում է, որ այս ժամանակահատվածում շատ բան է փոխվել, և կարծում եմ, որ Պեկինի ծրագրի բազմաթիվ պրոբլեմային ոլորտներ պետք է վերլուծել և վերանայել: Ի վերջո, առաջանում են նոր մակարդակի խնդիրներ, չեն կարող չառաջանալ, քանի որ անցել է 15 տարի: Եվս մեկ հանգամանք. այստեղ՝ ՀԿ-ների համաժողովում առավել հստակ նկատվում է այն, որ կանանց շարժմանը պակասում է ժառանգորդության տարրը: Դատեք ինքներդ. ես չեմ եղել 10 տարի, և այդ ժամանակահատվածում ոչ կառավարական պատվիրակությունների կազմը գրեթե չի փոխվել, և շատ կանայք, անկեղծ ասած, չեն երիտասարդացել... Ցավում եմ, որ ժառանգորդությունը կաղում է, և եթե չլինի այդ գործոնը, և ավագ գործընկերները չսովորեցնեն երիտասարդներին, ապա կանանց շարժումը չի զարգանա...

**Ալինա Սամատդինովա**
*Ղազախստանի քաղաքացիական դաշինք*

# «Վերարտադրողական առողջությունը ՀԿ-ների համաժողովի կիզակետում»



Ես հնարավորություն եմ ունեցել մասնակցելու ոչ միայն 54-րդ նստաշրջանի աշխատանքներին, այլ նաև «Պեկին+15» կանանց ոչ կառավարական կազմակերպությունների գլոբալ համաժողովին, որը բացվեց փետրվարի 27-28-ը Նյու Յորքում՝ նստաշրջանի սկսվելուց երկու օր առաջ: Դա մեր երրորդ հանդիպումն էր 1995 թ. Պեկինի համաժողովից հետո: Իհարկե, այս հանդիպումը մասշտաբներով Պեկինի համանման ՈԿԿ համաժողովի հետ չի համեմատվի, սակայն նույնիսկ Պեկին+10 միջոցառումների համեմատությամբ ժողովուրդը քիչ էր: Հավանաբար, ազդել էր տնտեսական ճգնաժամը, ոչ բոլոր կազմակերպություններն էին կարողացել ֆինանսավորում գտնել:

Այս հանդիպման հիմնական ուշադրությունը սևեռված էր կանանց վերարտադրողական առողջության հիմնախնդրին՝ այսօր աշխարհում առկա տնտեսական իրավիճակի լույսի ներքո: Այս համատեքստում շոշափվում էր նաև կանանց նկատմամբ բռնության խնդիրը, որով արդեն տարիներ շարունակ զբաղվում է մեր կազմակերպությունը: Ծանր տնտեսական իրավիճակը, անկասկած, բռնություն հրահրող գործոն է, թեպետ այդ երևույթի միակ պատճառը չէ: Բացի այդ, համաշխարհային վիճակագրությունը և մեր սեփական պրակտիկան վկայում են, որ բռնությունն ուղղակի սպառնալիք է կնոջ վերարտադրողական առողջությանը: Էլ չենք ասում, որ ընտանեկան բռնության ենթարկվող կանայք զրկված են ազատությունից, աշխատանքից, տեղաշարժից և այլ տարրական իրավունքներից: Այս խնդիրներն այս կամ այն չափով բնորոշ են բոլոր երկրներին: Տարբերությունն այն է, որ որոշ պետություններում վաղուց գործում է ընտանեկան բռնության մասին օրենքը, իսկ մենք դեռ հուսով ենք, որ այս տարի Ազգային ժողովը վերջապես կընդունի այն:

**Սուսաննա Վարդանյան**
*Հայաստանի Կանանց իրավունքների կենտրոնի ղեկավար*

# «Եկել եմ հասկանալու՝ ի՞նչ է կատարվում»

- Իմ կարծիքով՝ կանանց շարժումը և գենդերային հանրությունը գտնվում են գաղափարների որոշակի ճգնաժամում: Ես Պեկին+5-ի, Պեկին+10-ի մասնակից եմ եղել, և այսօր՝ 15 տարի անց, այստեղ եմ եկել, որպեսզի շոշափելով ձեռքս դնեմ զարկերակին և հասկանամ՝ ինչ է կատարվում, խոսեմ այդ մասին մարդկանց հետ: Կուզեի հավատալ, որ Պեկին+15-ը որոշակի հասունացման շրջան է, որը ենթադրում է ռեֆլեքսիա, իմաստավորում, ապա շարժման նոր փուլ: Կուզեի, որ ամեն ինչ հենց այդպես էլ լիներ: Դրա սաղմերը ես արդեն տեսնում եմ ամեն ինչում, պետք է միայն, որ դրանք ձևակերպվեն հետագա կոնկրետ քայլերում:

Ինչ վերաբերում է գենդերային հավասարության նոր կառույցին, ինչի մասին այստեղ շատ խոսվեց, ապա, կարծում եմ, «դուք, ընկերներ, ոնց էլ նստեք»... Ցավոք, նոր գործակալությունը, որքան էլ լավը լինի, կրելու է ՄԱԿ-ի ողջ կառույցի դրոշմը՝ մեծածավալ, շատ իներտ և ոչ միշտ բարյացակամ նրանց հանդեպ, ում համար աշխատում են:

Այսօր հիմնականում ՄԱԿ-ի կառույցների հաջողությունը որոշվում է բացառապես նրանով, թե ով է աշխատում տեղերում, ինչպիսի մարդիկ...



**Օլենա Սուսլովա**
*Ուկրաինայի Կանանց տեղեկատվական-խորհրդատվական կենտրոն*

## Ի դեպ

Նյու Յորք կատարած այցելությունից Ուկրաինա վերադառնալուց հետո Օլենա Սուսլովան դատական հայց է ներկայացրել ընդդեմ վարչապետ Նիկոլայ Ազարովի՝ մեղադրելով կառավարության ղեկավարին սեռերի հավասարության սահմանադրական նորմը խախտելու մեջ: Ավելի վաղ նման հայց էր ներկայացրել նաև «Լա Ստրադա Ուկրաինա» միջազգային իրավապաշտպան կենտրոնի նախագահ Եկատերինա Լևչենկոն:

Կանանց կազմակերպությունների զայրույթն էր հարուցել վարչապետի ռեպլիկը. *«Բարեփոխումներ անելը կանանց գործ չէ»*, որով նա փորձում էր բացատրել կանանց բացակայությունը իր նորընտիր կառավարությունում: *«Նիկոլայ Ազարովի այս արտահայտությունը ուկրաինացի կանանց ուղղակի խտրականություն է, և նրա մեկնաբանության մեջ չի կարող երկիմաստություն լինել: Նա ասել է այն, ինչ ուզել է. կնոջ տեղը խոհանոցում է, այլ ոչ կառավարությունում»*,- համարում են նրանք: Ըստ հայցի՝ փոխհատուցման չափը ընդամենը մեկ գրիվնա է:

## Փորձագետի սյունակ

# «Եթե կան ձեռքբերումներ, ապա դրանք, մեղմ ասած, տպավորիչ չեն»

- Ընդհանուր տպավորությունը, անկասկած, որ կա անկում, և այդ միտքը տարբեր ձևերով էր բարձրաձայնվում տարբեր երկրների գործընկերների հետ իմ շփման ընթացքում, լինեին նրանք ՀԿ-ների թե պաշտոնական պատվիրակությունների ներկայացուցիչներ: Դա հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրության անկում չէ, կա ընդհանուր անկում: Եթե չխորանանք պատճառների մեջ, ապա այն նկատվում է շատ հարցերում:

Նախ՝ այնպիսի կարևոր հանգրվան, ինչպիսին Պեկին+15-ն էր, պետք է նշանավորվեր առավել լուրջ ձեռքբերումներով, նստաշրջանի առավել լավ կազմակերպմամբ և արդյունքներով: Արտաքուստ՝ ձևական ընթացակարգը պահպանված էր. հատուկ արտագնա նիստ էր հրավիրվել՝ նվիրված արդյունքներին, ներկա էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, հանդիսավոր նշեցին: Սակայն, խոսքը հանդիսությունների մասին չէ, այլ իրական աշխատանքի: Եվ այդ առումով, ինչպես փաստեցին բազմաթիվ երկրների և ՄԱԿ-ի կառույցների ներկայացուցիչները, եթե անգամ կան ձեռքբերումներ, ապա դրանք, մեղմ ասած, տպավորիչ չեն: Այսինքն՝ շարունակ խոսվում էր այն մասին, որ շատ բան արված չէ: Բնականաբար, հարց է ծագում՝ ինչո՞ւ: Չէ՞ որ 15 տարի առաջ մեծ ոգևորությամբ ընդունված Պեկինի գործողությունների ծրագիրը և նրանում հռչակված նպատակները ֆանտաստիկ չէին, որոնց հասնելու համար դարեր են անհրաժեշտ: Դրանք շատ կոնկրետ, գործառնական և լուծելի խնդիրներ ու նպատակներ էին 12 կրիտիկական ոլորտներում: Իհարկե, չի կարելի ասել, թե դրանք չեն լուծվում, բայց չի կարելի նաև չնկատել, որ մի շարք կառույցներ, ինչպիսիք են Եվրամիությունը, Եվրախորհուրդը, առավել ակտիվ են առաջ մղում այս հիմնախնդիրները, քան ՄԱԿ-ը: Եվ սա քննադատություն չէ, այլ նստաշրջանի այն մասնակիցների ընդհանուր դիրքորոշումը, որոնք համակարծիք էին անկման մասին հարցում:

Նստաշրջանի ընթացքում չէր լքում այն զգացողությունը, թե այն ՄԱԿ-ի համար այն կարևորագույն իրադարձությունը չէ, ինչպիսին պետք է լիներ: Դա առավել նկատելի է, երբ համեմատում ես ժնևում նախորդ նստաշրջանների և նախորդ միջոցառումների հետ, երբ բոլորը բուռն աշխատում են, բոլորը պայքարում են ամեն մի բառի համար, բոլորը ջանում են տեքստը կատարելության հասցնել, ակտիվ մասնակցում են այսպես կոչված կոկուսներին՝ խմբերին, որոնք մշակում են միասնական տեսակետ և փորձում են այն հնչեցնել ամենաբարձր մակարդակով: Այս նստաշրջանում ամեն ինչ բավականին ձանձրալի էր, ոչ դրամատիկ, ՀԿ-ները ընդհանրապես դուրս էին մղված, կասեի՝ մարգինալացված էին, և դա առանձին թեմա է:

Պատահական չէ, որ մարտի 8-ին Մեծ Բրիտանիայի ՅՈՒՆԻՖԵՄ-ի ներկայացուցիչները հանդես եկան հայտարարությամբ, որում հենց օգտագործվեց «մարգինալացում» եզրույթը, և շեշտվեց, որ դա անթույլատրելի է: Նրանք նստաշրջանի ընթացքում ընթերցեցին իրենց հայտարարությունը, և այն արժանացավ տարբեր երկրների հասարակական կազմակերպությունների հավանությանը:

Չեմ կարող չնշել, որ համաձայնեցված եզրակացությունների տեսքով ամփոփիչ փաստաթուղթ չընդունվեց: Նման փաստաթուղթը ցանկալի է, եթե ոչ պարտադիր: Փոխարենն ընդունվեց քաղաքական հռչակագիր, որում արտահայտված էր նվիրվածություն Պեկինին և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 23-րդ նստաշրջանին: 15 տարի անց նվիրվածության փաստումը տարօրինակ է այն իմաստով, որ եթե ամեն ինչ ընթանում է իր հունով, նման պնդումն անիմաստ է: Չէ՞ որ Պեկինն ընդունվել էր փոխհամաձայնությամբ, և դա որոշակի պարտավորություններ է դնում պետության վրա: Եվ եթե ոչ ոք հետ չի կանչել իր ստորագրությունը, ինչու պարբերաբար հաստատել սեփական նվիրվածությունը: Սա իմ սեփական կարծիքն է:

Նույն հռչակագրում կոչ է արվում ՄԱԿ-ի կառույցներին և կառավարություններին սերտորեն համագործակցել ՀԿ հատվածի հետ: Այս իմաստով հարց է ծագում. եթե սա ամրագրվում է հռչակագրի մակարդակով, ապա ինչո՞ւ է նստաշրջանի ընթացքը հակառակի մասին վկայում::

**Վլադիմիր Օսիպով**
*Հայաստանի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

## Ի՞նչ անել

# «Որոշումների նոր որակ եւ արդյունքում՝ կյանքի նոր, ավելի բարձր որակ»

**Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Ջեմմա Հասրաթյանի կարծիքով՝ առանց կանանց ներուժի արդյունավետ օգտագործման հնարավոր չէ ապահովել հանրապետությունում կենսամակարդակի բարձրացում: Եվ հենց այս հանգամանքն է շեշտադրում՝ պատմելով Նյու Յորքում անցկացված ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի մասին իր տպավորությունների մասին:**



- Իհարկե, աշխարհում Պեկինի գործողությունների ծրագրի իրականացման մեջ որոշակի առաջընթաց կա: Այս ուղղությամբ առավելագույն արդյունքի հասած երկրների շարքում են եվրոպական, մասնավորապես՝ սկանդինավյան երկրները, առաջընթաց է նկատվում լատինաամերիկյան տարածաշրջանում, էական տեղաշարժեր կան Աֆրիկայի ու Ասիայի երկրներում: Ցավոք, չեմ կարող նույնն ասել ԱՊՀ մասին: Ու այստեղ կարևոր է նշել այն հանգամանքը, որ պեկինյան գործընթացի ոչ մի միջոցառման ժամանակ, իսկ ես եղել եմ բոլորի մասնակիցը, սկսած Պեկինի համաժողովից, հաշվի չեն առնվել մեր երկրների առանձնահատկությունները. այն, որ իրենց զարգացման խորհրդային շրջանում մեր երկրներն ունեցել են կանանց ներկայացվածության բավական բարձր մակարդակ բոլոր կառույցներում, սակայն հասարակական-քաղաքական կարգի փոփոխության հետ կապված նրանցում ձևավորվեց կանանց մասնակցությունը մերժող նահապետական կարծրատիպերի նոր ալիք: Ու այստեղ անհրաժեշտ են նոր մոտեցումներ, նոր տեխնոլոգիաներ, նոր քաղաքականություն, որպեսզի հասնենք ներդաշնակ զարգացմանը նոր ժամանակակից դիսկուրսով:

**- Ձեր կարծիքով՝ այս նստաշրջանում ի՞նչ նոր մոտեցումներ ու գաղափարներ հնչեցին:**

- Ես ինձ համար առանձնացրել եմ երկու գործոն: Նախ՝ պետական գենդերային քաղաքականության անհրաժեշտությունը՝ սեռերի հավասարության ապահովման ուղղությամբ: Երկրորդ՝ բազմաթիվ երկրներ ստեղծել են այդ հարցերով ամենաբարձր մակարդակով զբաղվող հատուկ կառույցներ: Պատահական չէ, որ այն երկրներում, որտեղ հասել են երկու սեռերի հավասարակշռված ներկայացվածությանը որոշումների ընդունման մակարդակում, գործում են կանանց հիմնախնդիրներով կամ գենդերային զարգացման հարցերով պետական խորհուրդներ կամ հատուկ նախարարություններ:

Ի հետևանս՝ զարգացման գործընթացներում հաշվի են առնվում երկու սեռերի կարծիքը, այսինքն՝ ապահովվում է ընդունվող որոշումների նոր որակը, իսկ արդյունքում՝ կյանքի նոր որակը: Հենց դրանում է գենդերային գաղափարախոսության ողջ իմաստը: Սկանդինավյան երկրներում բնակչության կյանքի ամենաբարձր մակարդակը պատահական չէ, այլ ճիշտ ձևավորված և հաջողությամբ իրականացվող գենդերային քաղաքականության արդյունք:

**- Այս իմաստով մեր երկրում ի՞նչ հիմնախնդիրներ պետք է լուծվեն, և մեզ համար ո՞ր դրական փորձն է ուսանելի:**

- Ես կարծում եմ, որ պետությունը պետք է լուծի գլխավոր հիմնախնդիրը՝ ինչպե՞ս արդյունավետ օգտագործել երկրի մտավոր ներուժը: Իսկ այս ռեսուրսում կանայք բավական ծանրակշիռ են ներկայացված. Հայաստանում, ինչպես հայտնի է, շատ բարձր է կանանց կրթական ու մասնագիտական մակարդակը: Աշխարհում շատ քիչ երկրներ կարող են հպարտանալ նրանով, որ յուրաքանչյուր 4-5-րդ կինը բարձրագույն կրթություն ունի, որ բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում ավելի քան 60 տոկոսը կանայք են: Կարծում եմ, որ մեր երկիրը պետք է իրատեսորեն գնահատի իրավիճակը, այլ ոչ թե սերմանի այն կարծիքը, որ մեզանում կանանց լավ են վերաբերվում: Տարբերություն կա, թե ինչպես տոն օրերին ծաղիկներ նվիրել կանանց և ինչպես ներգրավել նրանց ներուժը հասարակության զարգացման գործընթացներում:

Իսկ այն հարցում, թե ինչպես դրան հասնել, ենթադրում եմ, որ մենք չպետք է հրաժարվենք միջազգային փորձից և սկզբի համար Հայաստանում որքան հնարավոր է շուտ ստեղծենք գենդերային հավասարության հասնելու ազգային մեխանիզմ: Ինչպես հայտնի է, Հայաստանի կառավարությունը վերջերս հաստատել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը, ու հիմա կարևոր է ապահովել դրա կենսունակությունը: Ուզում եմ վստահ լինել, որ այն թղթի վրա չի մնա, այլ կիրականացվի:

**- Դուք մի առիթով պատմում էիք, որ Պեկինի համաժողովում բոլորի վրա ցնցող տպավորություն էր գործել Բենազիր Բհուտտոյի ելույթը: Արդյոք դրա նման ինչ-որ բան եղավ այս անգամ:**

- Այն ժամանակ Բենազիր Բհուտտոն հատուկ ելույթ ունեցավ կանանց ոչ կառավարական կազմակերպությունների առջև զուգահեռ համաժողովում, որին մասնակցում էին 30 հազարից ավելի կանայք: Հիշում եմ նաև Հիլարի Քլինթոնի ելույթը և այն եզրակացությունը, որ արեցի՝ աշխարհում քիչ չեն խելացի, կիրթ, ողջամիտ և պատասխանատու կանայք: Այնտեղ իրոք շատ էին կանայք, ովքեր կարող էին օրինակ, իդեալ ծառայել բոլորի համար և՛ հասարակական հատվածում, և՛ իշխանությունում:

Նյու Յորքում այլ ձևաչափ էր՝ պաշտոնական մակարդակով նիստեր, որոնք նման ելույթներ չեն ենթադրում: Սակայն այդ կարգի տպավորիչ, կարծես սրտի խորքից բխող ելույթներից չեմ կարող չնշել Բան Կի Մունի՝ բռնության հարցերով ելույթը, որում նա խոսում էր բռնության դեմ պայքարում տղամարդկանց մասնակցության անհրաժեշտության մասին: Խոսում էր որդու, ամուսնու, հոր դիրքերից... Կարծում եմ՝ տղամարդկանց մասնակցության այս շեշտադրումը խիստ կարևոր է, քանզի գենդերային բռնության հիմնախնդիրը հաճախ սխալ է ընկալվում: Դա կանանց հիմնախնդիրը չէ: Ըստ էության դա հասարակության, իշխանության ու տղամարդկանց հիմնախնդիրն է:

**- Ի՞նչ կասեք նստաշրջանի աշխատանքներին կանանց ոչ կառավարական կազմակերպությունների աշխատանքի մասին: Կարծիք կա, որ այս անգամ այդ հատվածի ակտիվությունը նվազագույնն էր:**

- Վերլուծելով Պեկինի գործընթացի բոլոր անցած փուլերը՝ չեմ կարող չնկատել, որ նկատվում է կանանց շարժման որոշ թուլացում: Ինձ թվում է՝ դա կախված է բազմաթիվ հանգամանքներից: Իր դերն է խաղացել համաշխարհային տնտեսական ճգնաժամը, բայց ոչ միայն: Բացի այդ, այն միջազգային կառույցները, որոնք կոչված են նպաստելու և օգնելու կանանց շարժմանը, իրենք են թուլացրել իրենց աշխատանքը: Նրանք հաջողությամբ չեն աշխատում բոլոր տարածաշրջաններում, հատկապես ԱՊՀ-ում: Ես նախևառաջ նկատի ունեմ ՅՈՒՆԻՖԵՄ-ը: Կա նաև մեկ այլ հիմնախնդիր, ինչի մասին արդեն հիշատակվել է՝ հետխորհրդային հանրապետությունների առանձնահատկությունները: Այն պաթոսը, որը բնորոշ էր Պեկինին հաջորդող առաջին տարիներին, թուլացավ, ու, հավանաբար, դրա պատճառը ժողովրդավարական զարգացման այն դժվարություններն էին, որոնց բախվեց այդ երկրների ոչ կառավարական կազմակերպությունների հատվածը այդ տարիներին: Որոշակի անվստահությունը, դանդաղ ձեռք բերվող արդյունքները, ազգային կազմակերպությունների անբավարար կապը կանանց միջազգային շարժման հետ՝ այս ամենը, իմ կարծիքով, ազդում է կանանց ՀԿ-ների ակտիվության վրա: Ու հնարավոր է, որ ՄԱԿ-ի գենդերային հարցերը համակարգող նոր կառույցի ստեղծումը հնարավորություն կստեղծի փոխել իրավիճակը դեպի լավը՝ կանանց շարժմանը սատարելու իմաստով:

## Ինչպե՞ս անել

# Անժելիկա Հարությունովա. «Ի պատասխան տնտեսական ճգնաժամի՝ պետք է ոչ թե կրճատել, այլ ավելացնել կանանց ուղղված ներդրումները»



**Նյու Յորքում Կանանց համաշխարհային հիմնադրամի կազմակերպած մի շարք զուգահեռ միջոցառումներից մեկը նվիրված էր կանանց կազմակերպությունների զարգացմանն ուղղված ֆինանսական աջակցության հիմնախնդիրներին: Կանանց ոչ կառավարական կազմակերպությունների ու նրանց գործունեությանը աջակցող հիմնադրամների ներկայացուցիչների հանդիպումը անցնում էր ՄԱԿ-ի կարգախոսի ներքո. «Չկա զարգացման համար ավելի արդյունավետ գործիք, քան կանանց հնարավորությունների ընդլայնումը», ինչը կլոր սեղանի կազմակերպիչների համոզմունքով՝ առանձնակի հրատապություն է ձեռք բերում ճգնաժամի հետևանքները հաղթահարելու պայմաններում:**

Կլոր սեղանի անվանումից իսկ պարզ էր, որ նրա կազմակերպիչներին հուզող գլխավոր հարցերից մեկն այն էր, որ «կանանց ծրագրերում ներդրված յուրաքանչյուր դոլարն աշխատի կանանց առաջընթացի օգտին»: Հետևաբար, հանդիպման օրակարգում գլխավոր տեղը զբաղեցնում էր կանանց զարգացման մեջ ներդրվող միջոցների արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը: Ուղիներից մեկը՝ականջալուր լինել կանանց ՀԿ-ների կարիքներին, ինչը, ինչպես նկատեցին բանավեճի մասնակիցները, անում են կանանց հիմնախնդիրներով զբաղվող ոչ բոլոր հիմնադրամները: Խոսում էին նաև պեկինյան նպատակների իրականացման և այդ ուղղությամբ տնտեսական ճգնաժամի հետևանքների նվազեցման մասին: *«Եվ այս առումով կարևոր է թույլ չտալ, որ միջոցների պակասի հետևանքով կանանց առաջընթացին ուղղված ծրագրերը կրճատվեն, ինչի վտանգը կա»*,- համարում է Անժելիկա Հարությունովան՝ Կանանց համաշխարհային հիմնադրամի Եվրոպայի ու ԱՊՀ-ի գծով ծրագրերի տնօրենը: Ի դեպ, հիմնադրամն ամենահայտնի ու խոշոր կազմակերպություններից է, որն ակտիվորեն աջակցում է աշխարհի բոլոր տարածաշրջաններում կանանց կազմակերպություններին:

Ճգնաժամը, շարունակում է Հարությունովան, իրոք, անդրադարձել է բազմաթիվ դոնոր կազմակերպությունների վրա՝ դժվարացնելով միջոցների հայթայթումը, ինչի հետևանքով հարկ է եղել կրճատել ծախսերը: *«Սակայն Կանանց համաշխարհային հիմնադրամը դա անում է ի հաշիվ իրեն, այլ ոչ իր կողմից ֆինանսավորվող ծրագրերի կրճատման հաշվին: Համենայն դեպս, մեր հիմնադրամը հենց նման ռազմավարություն է որդեգրել, թեև, ցավոք, կա նաև այլ՝ կանանց ծրագրերի կրճատման գործելակերպ»*,- ասում է նա՝ համոզված լինելով, որ ի պատասխան տնտեսական ճգնաժամի՝ պետք է հակառակը գործել:

*«Պետք է բոլոր պետությունները և դոնոր կազմակերպությունները գիտակցեն, թե ճգնաժամը որքան լրջորեն է ազդել Պեկինի ծրագրի բոլոր կողմերի և կանանց առօրյա հիմնախնդիրների վրա, ու ավելացնեն իրենց ռեսուրսներն ու ազդեցությունն այս ուղղությամբ: Չէի ցանկանա, որ 54-րդ նստաշրջանը սահմանափակվեր եզրակացությամբ, որ առաջընթաց է տեղի ունեցել, որ կան բազմաթիվ դրական փոփոխություններ, ու չշեշտադրեր այն, որ անհրաժեշտ է ավելի շատ կանանց զարգացմանը նպաստող ներդրումներ կատարել: Ամեն դեպքում, ձեռքբերածի վրա կանգ առնել չի կարելի, իսկ ճգնաժամն էլ լավ առիթ է նորովի նայելու մեր ջանքերին»*,- ամփոփեց նա:

## Շնորհակալության խոսք

**Մեր երախտագիտությունն ենք հայտնում Կանանց համաշխարհային հիմնադրամին այն աջակցության համար, որի շրջանակներում հնարավոր դարձավ «Կինը և քաղաքականությունը» հավելվածի խմբագրի մասնակցությունը ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանին:**

## Ինովացիա

### ՄԱԿ-ի նոր գենդերային ճարտարապետությունը

Խոսքը ՄԱԿ-ի շրջանակներում նոր կառույցի ստեղծման մասին է, որը կմիավորի ներկայումս սեռերի հավասարության հիմնախնդրով զբաղվող գործող չորս գերատեսչությունները: Կուլուարներում այն կոչում են ՄԱԿ-ի «կանանց գործակալություն»: Միավորման նպատակն ու իմաստն այն է, որպեսզի առավելագույնս համակարգվեն նույն խնդրով աշխատող կառույցների ջանքերն ու ռեսուրսները, այլ կերպ ասած՝ կարգավորել գենդերային հիմնախնդիրները՝ «մեկ պատուհանից» սկզբունքով: Ընդ սմին, նոր գործակալության ղեկավարությունը կիրականացվի ամենաբարձր մակարդակով՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալի:

Ներկայումս ՄԱԿ-ում ոչ ֆորմալ քննարկումներ են ընթանում ընթացակարգային հարցերի շուրջ, ու ենթադրվում է, որ դրանք կտևեն մինչև աշուն: Նման բանակցություններ են ընթացել նաև ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանի ընթացքում: Առավելագույն ակտիվություն ու շահագրգռություն է հանդես բերում ՅՈՒՆԻՖԵՄ-ը՝ որպես կանանց հարցերով զբաղվող ամենախոշոր կառույց: Ի դեպ, այս հարցը եղել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ երկրների ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցությամբ հանդիպման օրակարգում, որը կազմակերպել էին ՅՈՒՆԻՖԵՄ-ի տարածաշրջանային ստորաբաժանումները՝ ի դեմս եվրոպական տարածաշրջանում և ԱՊՀ-ում ծրագրերի ղեկավարներ Զինա Մունլայի և Դամիրա Սարթբաևայի: Ընդհանուր առմամբ, այս հանդիպման ընթացքում հասարակական կազմակերպությունները խոսում էին իրենց ցավոտ խնդիրների մասին, և նոր կառույցի ապագա ձևաչափը նրանց հետաքրքրում էր գերազանցապես այն բանի իմաստով, թե այն որքանով կսատարի կանանց շարժումը տեղերում, այս կամ այն տարածաշրջանում: Նաև մտահոգություն էր հնչում, որ նոր կառույցը կժառանգի ՅՈՒՆԻՖԵՄ-ի հին խնդիրները, թեև վերակազմավորման գաղափարը կանանց կազմակերպությունները միայն դրական են ընկալում: Այլ կերպ չէր էլ կարող լինել, եթե հաշվի առնենք, որ ՄԱԿ-ում այս գործընթացում ոչ վերջին դեր են խաղացել կանանց միջազգային շարժման ակտիվիստները:

**Հավելվածը հրատարակվում է Կանանց համար գլոբալ հիմնադրամի աջակցությամբ**

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Ձևավորումը՝ Վահե Դիոնեսյանի
Տպաքանակը՝ 6000